

ԱՆԾԱՆՈԹ ՆԱՄԱԿ
ՏՓՂԻՍԻ 1795 Թ. ԱՎԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ Խ. ԱՔՈՎՅԱՆԻ
«ՉԱՅՆ ԱՂԱՂԱԿԻ...» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

1

Աբովյանի գրական բոլոր հղացումները իրական, անմիջական ազդակներ են ունեցել: Ինչի մասին էլ նա դրել է, միշտ էլ խորապես ազդվել ու շարունակական մտորումների նյութ է դարձրել, անկախ նրանից՝ վերարտադրության առարկան հնօրյա շինարարական արվեստի որևէ կոթո՞ղ է, անցյալի սրտամորմոք հո՞ւշ, իր հետ պատահած ճակատագրական դիպված, թե՞ ազդի աններդաշնակ առօրյայից բխեցված մարդասիրական կամ հայրենասիրական խորհրդածություն:

Այս առումով զարմանալի հետևողական է եղել նա: Երևութական հորինվածքներով ու խաբուսիկ մտապատրանքներով երբե՞ք չի զինավառվել: Միակ բացառությունը, թերևս, «Չայն աղաղակի ուրբոց և այլեայ փակ է զլսելիս...» անավարտ քերթվածն է՝ Տփղիսի 1795 թվականի ավերման մասին¹: Միայն այս անգամ Աբովյանը նյութ է առել ավելի քան քառասուն տարի առաջ կատարված անցքերից, բայց իր սկզբունքներին դավաճանած չլինելու համար, մի կողմ թողած տփղիսահայ միջավայրում շրջող պատմությունները, իրեն օղնական ու առաջնորդ է դարձրել պատմական վավերագրերը, այն էլ ոչ պատահական, այլ դեպքերին անմիջական մասնակցություն ունեցած մարդկանց՝ ականատեսի խոսքերի հիմամբ կազմված և դեռևս հին օրերում երկիցս և երիցս հավաստիությունը ստուգված մի հիշատակարան:

Նյութի ընտրությունն ինքյան խիստ ուշագրավ է:

Տփղիսահայության պատմական բախտի տարեգրության ամենամոռայլ էջը թերևս հենց 1795 թվականի ավերմունքն ու սրածություններն էին: Ներքին՝ Աղա-Մահմադ-խանի և նրա գաշնակիցների (առաջին հերթին՝ Գանձակի Ջավադ-խանի ու Ջրարերդի Մելիք Մեջլումի) զորքն ու խուժանը կատարեցին շարագործություններ, որոնց սելջուկ-թուրքերը կարող էին նախանձել: Կես դար հետո էլ մարդիկ սարսուռով էին վերհիշում հին մղձավանջը և նզովում շարագործության հրահրողներին:

«Տակաւին յիշեն ծերք ժամանակիս և ընդ որ տակաւին չեն ցամաքեալ արտասուք աչաց հարց մերոց», — մի առիթով վկայում է բանաստեղծ Գաբրիել Պատկանյանը²:

Ներսիսյան դպրոցում աշակերտելու տարիներին (1823—1826, II), ինչպես նաև հետագայում՝ Դորպատից վերադառնալուց հետո, Տփղիսի գավառա-

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Երևան, 1948, էջ 183—184: Սկադիր ընդդիմը տե՛ս Ա Ն 91:

² «Կովկաս», 1847, № 26:

կան ղարոցում պաշտոնավարելու ժամանակ, 1836-ի կեսերից սկսած, Աբովյանը շատ առիթներ ուներ լսելու սրտակեղեք զրույցներ անցած-դնացած օրերի մասին, որոնք նրա աչքի առաջ էին բերում հնօրյա դժոխքը, շնայած որ ինքն Արարատյան աշխարհից էր և դեպքերից մեկնեկես տասնամյակ հետո ծնված՝, Հիմա էլ, ժողովրդական տոնախմբությունների ժամանակ, կրկին երգում էին Շամշի-Մելքոյի հին երգը՝ Տփղիսի ավերման մասին.

...Քահանաներուն շունն էր ուտում, ոչ մինը չմտավ նաշը,
Գիտի պես արյուն էր զնում, բոստան էր աթմորթու լեշը,
Որդին մորիցն էին խլում, էր սուգ ու շիվան քաղաքիս...
Քաղաքը վերանա արին, տեղ շինեցին րայիզուշի և այլն⁴:

Ավելին, ինչպես վկայում է Րաֆֆին, «Հավլարարի հին կանանց բերանում», ութսուն-իննսուն տարի հետո էլ, նույն երգի առանձին տողեր դարձել էին անեծք և կրկնվում էին.

Մելիք-Մեջլումը շուն դառնա,
Ջավադ-խանը՝ պստիկ կուճի (= լակոտ).
Մելիք-Մեջլումի ազգեմեն
Թող չմնա մեկը Շուշի...⁵

Հին զրույցներն ու երգ-անեծքները աստիճանաբար զրավում էին Աբովյանին, պարտադրում ծանոթանալու նաև հնօրյա վավերագրերի, տեղական խորհրդածությունների նյութ դարձնել անցած եղելությունները, մտովի վերականգնել վաղուց կատարվածը, այնքան, որ ինքնաբերարար ցանկություն է անվում կուտակված տպավորությունները հանդավոր խոսքով վերարտադրելու:

Սկզբում բառերն իրար են հաջորդում կապարե ծանրությամբ: Թվում է՝ ո՛չ թե բանաստեղծություն ես կարդում, այլ ունկնդրում հնօրյա գուժկաններին, որոնք միայն իրենց յուրահատուկ ահասարսուռ ոճով դուժում են Տփղիս հայաքաղաքի զլխին իջած ծանր օրհասը.

Ձայն ազադակի որբոց և ալրեաց փակէ զլսելիս.
Դրդայ քաղաքն, ծփեն բնակիչք ի հեղեղ արեան.
Արքայն Հերակլէս քաջ նիդակակցովք յոգբաձայն լալիս
Թողու զիւր աթոռ Կախէթեան յանտառս լինի ապաստան:

Ի դառն տաղնասլի հայր զորդի, գտուն մոռանայ, թաղչի,
Եւ սուր սեւազունդ, դառնաշունչ Պարսկաց կատաղի, անհնար,
Ղորդի ի ծնողաց, զհարսն յառագաստէ վարէ իւր գերի,
Աղայ Սահմադ-խան անսիրտ բռնաւորն անողորմարար:

3 Դպրոցում և հետագայում, Աբովյանը մտերիմ էր նիկողայոս Տեր Շմավոնյանի հետ: Եթե վերջինի նախնիներից էր Տփղիսի Մուղնու եկեղեցու ավագերեց, «Կենդանի Նահատակ» անվանված Տեր Գրիգոր Տեր Շմավոնյանը, որին Աղա-Մահմադ-խանի հրոսակները քաղաքի ղրավման օրը ենթարկել էին ահավոր տանջանքների (տե՛ս «Դիվան հայոց պատմության», դ. Ժ, էջ 372—373), ապա շատ հավանական է, որ Շմավոնյաններից ես Աբովյանը քաղել է որոշ տեղեկություններ Տփղիսի բնակչության տառապանքների մասին:

4 «Հայ աշուղներ» (XVII—XVIII դդ.), կազմեց Հ. Սահակյան, Երևան, 1961, էջ 297: Լ. Մելիքսեթ-Քեկ, Շամշի-Մելքոն և նրա հայերեն խաղերը, Երևան, 1958, էջ 56—59:

5 Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Վիեննա, 1906, էջ 145:

Ի տանէ ի տուն մտանեն դահիճք մերկեալ դսուսեր,
Կոծ ողբերգութեան զքարինս գալարէ, մանկանց և տղայոց.
Լերինք Տիխիսոյ հեծեծեն ի ցաւ բնակչաց անտէր,
Այլ տնօրինին սիրտ արեանարբու ո՛չ շարժի յողբոց:

Վեհադունք Վրաց վատնեալ դյետին ճիւղ զօրութեան իւրեանց,
Եւ արքայն գթոտ ի հեռուստ կացեալ յայս դառն տեսարան
Հային և ողբան, բայց անդօրացեալ յանթիւ թշնամեաց
Փակեն զղէմս իւրեանց, փախչին զի մի՛ վկայ լիցին շարութեանս:

Գանձք, հարստութիւնք, կալուածք թանկագինք աւար հարկանին,
Ասլարանք շքեղք, գահոյք փարթամաց թաղին ի մոխիր,
Ջոր ձեռք արեանոռնոյք կործանել կամ խլել անգ ո՛չ կարացին,
Անյագ հրդեհին եղև կերակուր [և] անբուժ ոճիր⁶:

Թվում է՝ արդեն աշխարհի վերջն է, շարագործությունը տոնում է իր լիա-
կատար հաղթանակը, մարդը կորցրել է խիղճն ու դեմքը, ե նրա վերածնման,
մարդկայնության, ազնիվ ու առաքինի կյանքի ճանապարհը դառնալու հուս
ալիւս չկա:

Մինչև այստեղ բանաստեղծությունը զրված է գրաբար, տասնհինգ վան-
կանի բանատողերով, հետո արդեն միանգամից փոխվում են չափը (տասը
վանկանի բանատող) և լեզուն, որ հիմնականում աշխարհագրար է: Պատճառը
թերևս այն է, որ գրել է ընդհատումներով, կամ առաջին մասի համար գրաբար
աղբյուր է օգտագործել ու անուղղակիորեն նրա ոճին ենթարկվել, իսկ երկրորդը
ժողովրդական ասացողների նմանությամբ արվեստաբանել:

Հասարակական կյանքի շարժիչ ուժերի իր իսկ ըմբռնումների դորու-
թյամբ, իդեալիստ փիլիսոփաների հուշակած վեհ ու բարի գաղափարների հա-
վերժության գիտակցությամբ, սիրո ուժի, սիրո կրոնի ամենակարող ուժի ան-
խախտ համոզմամբ բանաստեղծը պահ մի շեղում է հայացքը մղձավանջային
տեսիլքներից և արյան ու ավերի մեջ որոնում անարատ խորշեր, ուր, այնու-
հանդերձ, իր երերուն քայլերն էր անում Առաքինությունը:

Հավատարիմ իր ոռմանտիկ գեղադիտությանը, Աբովյանը գտնում է լույսի
այդ շողը և բանաստեղծության շարունակությունը տանում միանգամայն ալ
հունով:

Բայց և յայս միջոց սուրբ Առաքինութիւնն
Ցուցանէ մեղ զիւր հղօր զօրութիւն...⁷

Դեպքերի ընթացքն այսուհետև ղժվար չէ կռահել, եթե քերթվածը անգամ
այստեղ ընդհատվելու Բայց մենք հետևենք հետագա բանատողերին ու հաջորդ
դիսվածներին:

Արյունակալած աչքերով պարսիկ գորականը՝ սուրբ մերկացրած և ամեն
կենդանի էակ ոչնչացնելու անհագ ծարավով, մինչ խուժում է մի համեստ հարկ,
նրա առջև բացվում է այս սրտակեղև տեսարանը:

6 Խ. Աբովյանի թողոններ, № 91: Վերջին տողը տպագրության ժամանակ աղավաղված է
(տե՛ս Խ. Աբովյան, հ. I, էջ 183),

7 Խ. Աբովյան, հ. I, էջ 183:

...Երեխա մի անդ դետնի վրա ընկած,
 Անտեր, անբոմակ՝ աչքն երկինքն քցած,
 Քիչ էր մնացել, որ ավանդի հողին:
 Եվ խղճալի մայրն տեսյալ յուր որդին
 էս դառն վիճակումն, ծնկան վրա ընկած
 Ողբայր դառնապես, աղաղակեր ղԱստված:
 Շատ լալուցն և սգոցն հատյալ էր ձայնր.
 Հենց էն էր կամում՝ ցավազար որդուն
 Ծածկի և փոքր-ինչ մխիթարի նրան,
 Մեկ էլ էն տեսավ՝ դահիճն մտավ տուն:
 «Ո՛վ սուրբ Տիրամայր, որբոց սլահապան,
 Քեզ եմ ասլավինել, հա՛ս ինձ օգնություն».—
 Ասաց և դրկյալ որդին յուր միայն
 Խնդրե ի դահճեն թափել յուր արյուն...»

Եվ միանգամից վտիվում է տեսարանը, տիրապետող են դառնում հուսա-
 վառ դույնները, մայրական սիրո առջև ընկրկում է շարադործը, դաղանի մեջ
 արթնանում է մարդը, Առաքինությունը հաղթանակում է, անձնադուհ մայրը և
 ցավազար որդին մի ակնթարթում փրկվում են: Սա հանդույցի լուծման աբով-
 յանական նախասիրած եղանակ է: Այդպես է բացվում Կրեսոսի համր որդու լե-
 զուն «Վերք Հալաստանի» վեպի Հառաջաբանում, այդպես է սիբիրցի ռուս աղ-
 իկը փրկում հորը Աբովյանի թարգմանած «Ֆեոդորա» դրամայում, այդպես է
 քրիստոնյա երիտասարդը հաղորդակից դառնում մահմեդական օրիորդի տա-
 ւապանքներին «Թուրքի աղչիկը» նովելում:

Շարունակության մեջ Աբովյանը ուղղակիորեն ո՛չ մի բառ չի ասում «աչքն
 արյունով լցված» «դահճի» վերափոխման մասին, բայց դա կոտակում է նա-
 խորդ՝ «...Առաքինութիւնն ցուցանէ մեզ զիր հզօր զօրութիւն» արտահայտու-
 թյունից և վերջին անավարտ քառյակից (4-րդ տողը հետո ջնջել է).

«Թէ ուստի՞ գաս, օտարական, չգիտեմ,
 Բայց և քո ձեռք սնուցին զավակս, և դու էլ
 Հայր ես էլած, ունիս զորդիս, ես կարծեմ,
 [Կյանք իմ բոլոր զոհ լիցի, աղաչեմ]...

Անկեղծ սերը և հավատարմությունը միշտ էլ ի վիճակի են կանխելու շա-
 րազործությունը, վերափոխելու հրեշին անգամ, փուշը վարդ դարձնելու... Այս
 գաղափարը Աբովյանին փոխանցվել է Շիլլերից, և «Ձայն աղաղակի...» բա-
 նաստեղծությունը այլ բան չէ, քան հայկական զուգահեռը Շիլլերի «Երաշխիք»
 («Die Bürgschaft») բալլադի, որի առաջին հինգ տունը Աբովյանը թարգմա-
 նել էր դեռևս Դորուլատում⁹, իսկ հետագայում՝ «Նախաշալիղ»-ի առաջին,
 տպագիր տարբերակը կազմելիս (1837—1838 թթ.), ամբողջությամբ փոխա-

⁸ Նույն տեղում, էջ 184:

⁹ Տե՛ս Աբովյանի թողոնները ԴԱԹ-ում, № 75 (տպագրված՝ Խ. Աբովյան, Երկերի լիա-
 կատար ժողովածու, հ. 1, էջ 304): Թարգմանության ժամանակը որոշվում է ձեռագրի առանձնա-
 հատկություններով և շտապորժած թղթի օգնությամբ, որոնք բնորոշ են 1831—32 թվականներին,
 բայց ո՛չ ավելի ուշ:

դրել հայերեն՝ «Անբ, բարեկամություն» խորագրով՝ հայացնելով գործող անձանց և փոխելով դեպքերի կատարման ժամանակն ու միջավայրը¹⁰։

Պիտի կարծել՝ բանաստեղծությունը այնուհետև շատ էլ չպիտի երկարեր, թերևս մի երկու քառյակ էլ, որոնց մեջ հեղինակն ու իր հերոսները սլիտի փառաբանեին Սիրո և Առաքինության գաղափարները՝ զգայացունց խոսքերով միմյանց գիմելով։ Հնարավոր է, որ բանաստեղծությունն ունեցած լինի նաև վերջնական տարբերակ, ավարտուն ու մաքուր արտագրված, որ մեղ չի հասել։ Բայց դա քիչ համոզիչ է։ Աբովյանի բանաստեղծական խառնվածքին, հատկապես նախավերջյան շրջանում, հատուկ է եղել մի բան սկսելն ու կիսատ թողնելը։

Երբ է գրված «Ձայն աղաղակի...» անավարտ ողբը։ Առանց այլևայլության՝ ետգորպատյան շրջանում, 1837—1839 թթ. միջև, բայց ո՛չ երբեք ավելի ուշ։ Այդ են հուշում ստեղծագործության գաղափարական հետախնդրությունը և աղգակցությունը Շիլլերի «Die Bürgschaft»-ի փոխադրությանը, ինչպես նաև բնագրի գրչության յուրահատկությունները (որ ամենևին էլ երկրորդական կովաններ չեն որևէ երկի դրության ժամանակը որոշելիս)։ Դրանք հատկանշական են մատնանշված տարիների ձեռագրերին։

1840 թվականին, երբ Աբովյանը նոր խմբագրման ենթարկեց «Նախաշավիղ»-ը, նրա մեջ տեղավորեց նաև Տփղիսի ավերման վերաբերյալ մի ողբ («Плачь о разорении Тифлиса Ага-Магомет-ханом») ¹¹, որը, անտարակույս, քննության առնված բանաստեղծության տարբերակներից պիտի լիներ։ «Նախաշավիղ»-ի այդ խմբագրության ձեռագիրը չի պահպանվել։ Մնացել են միայն նախապատրաստական նյութերից առանձին էջեր, այդ թվում նաև «Ձայն աղաղակի...»-ի նոր մշակումը, որը տեղավորված է մինչև 1840 թ. (ներառյալ) Աբովյանի դրած դրաբար երկերի դավթարում¹², «Վերջին հրաժարական քաջազոր արքային Հերակլի» խորագրով։

Սևագրի համեմատությամբ այն ունի էական տարբերություններ։

Մինչդեռ սևագիրն անխորագիր է. նոր տարբերակը վերնագրված է՝ «Վերջին հրաժարական քաջազոր արքային Հերակլի» և սկզբից ունի մի արձակ նախաբան, որ ավելի շատ հիշեցնում է ականատես, բայց զգայուն ժամանակագրի հիշատակարան, և որին ապա՝ աննշան վերամշակմամբ ու հապավմամբ, հաջորդում է սևագրի դրաբար մասը (տողեր 1—12 և 17—20)։ Համեմատությունը պարզում է, որ արձակ ու շափածո մասերի բովանդակությունը հիմնականում նույնն է։

Սևագրի երկրորդ, աշխարհաբար մասը, որ կոչված էր Առաքինության գաղափարի վերափոխիչ ուժը ցուցադրելու, հապավված է։ Թերևս այն պատճառով, որ Աբովյանին հակադեղարվեստական է երևացել պատմական նյութի մշակման ժամանակ իրականում չկատարված և սոսկ երևակայության ուժով չորինված կամայական դիպվածներով այն ծանրաբեռնելը։ Նույն շրջանում, 1839—40 թթ., իրականության գեղարվեստական վերարտադրման խնդրի

10 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VII, Երևան, 1956, էջ 418—419։

11 Տե՛ս Մատենադարան, Աղ. Երիցյանցի հավաքածու, № 148/263, էջ 3 և «Արձագանք», 1896, № 102։

12 Ինքնադիրը՝ Խ. Աբովյանի թողոններ, № 57, էջ 5—6։ Տպագրված նախ՝ Խ. Աբովյան, Նախաշավիղ (լուսատիպ նմանահանություն), Երևան, 1940, էջ LXXXIX—XCI, ապա՝ Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Երևան, 1947, էջ 229—230։

առնչությամբ գերմաներեն ակնարկներից մեկում Արուսյանը պարզ ասում է, որ եթե ուզում ես մի ինքնատիպ բան ստեղծել, ապա պարտավոր ես նկարագրել այն, ինչ եղել է, բայց ոչ երբեք հնարել¹³:

Վերջապես՝ լեզվական ատաղձի առումով զրվածքը թեպետ դարձել է միասնական (գրարար), սակայն ոճը խայտաբղետ է մնացել: Նոր զրված, արձակ մասում առկա է Հերակլի մենախոսությունը, նրա հրաժեշտի խոսքը՝ ուղղված թշնամու սրին հանձնված սիրելի քաղաքին, որ, սակայն, գերզգայության հրանգ է հաղորդում առանց այն էլ արցունքոտ զրվածքին և ակնբերաբար թուլացնում գեղարվեստականությունը:

«Զալն աղաղակի...» քերթվածն ստեղծելիս, ինչպես սկզբից էլ ասվեց, բացի բանավոր գրույցներից, Արուսյանն օգտվել է նաև գրավոր աղբյուրներից, որոնցից մեկին հարկ է անդրադառնալ: Դա մի անանուն և ընդարձակ նամակ է՝ զրված 1795 թվականի վերջերին և ուղղված ինչ-որ Գալուստ արքեպիսկոպոսի: Վավերագիրը պահվում է Արուսյանի թողոններում: Այն դեռ գրության օրերին հանված պատճեն է բուն նամակից, XVIII դարու բնորոշ գրչությամբ¹⁴:

Հասցեատերը, անտարակույս, երբեմնի նշանավոր Գալուստ վարդապետն է, էջմիածնի «արտաքին գործակալը և վեբիր», որին Սիմեոն, իսկ այնուհետև Ղուկաս կաթողիկոսները, 1779/80 թթ.-ից սկսած՝ շարունակաբար ուղարկում էին Վրաց աշխարհ, Հերակլ արքայի հետ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բանակցություններ վարելու՝ սկսած Վրաստանի հայոց արևելքի թեմակառուցելուց մինչև արքային սգահան անելու առթիվ նվերներ մատուցելը¹⁵:

Թեպետ և քաղաքի ավերման տարուց դեռ շատ առաջ Գալուստ վարդապետը (հետո՝ արքեպիսկոպոս) առաքելության էր ուղարկված Արևմտյան Հայաստան ու Պոլիս և կտրված էր տփղիսահայությունից, բայց շարունակում էր պահպանել աշխույժ հետաքրքրություն, շատ-շատերին նա անձամբ ճանաչում ու դեռ հիշում էր:

Տփղիսի ավերման լուրն առնելով՝ Գալուստ արքեպիսկոպոսը անհապաղ հանձնարարում է էջմիածնի իր մտերիմներին, գրել իրեն, թե իրականում ի՞նչ է կատարվել: Մի նամակ գրում են, բայց դա չի՞ գոհացնում նրան¹⁶, և երկրորդ անգամ խնդրում է՝ որոնել ականատես ու վստահելի անձինք, մանրամասն հարցուփորձ անել և ճշմարտությունն հաղորդել իրեն: Երկար որոնումներից հետո, ի վերջո, գտնում են Տփղիսի նորաշեն եկեղեցու ավադ քահանա Տեր-Հակոբին, որը կովի օրերին եղել էր քաղաքում, ենթարկվել փորձությունների, կորցրել 17 հոգուց բաղկացած ընտանիքը, գերեզմարվել: Ավելի ստուգապատում մեկ այլ անձ դժվար էր երևակայել: Նրա վկայություններն էլ վերաշարադրում է նամակի հեղինակը: Տեր-Հակոբը էջմիածնում էր եղել 1795 թ նոյեմբերի 25/26-ին, հետևաբար, նամակը զրված է դրանից մեկ-երկու օր հետո¹⁷:

¹³ Խ. Արուսյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. VIII, Երևան, 1958, էջ 151 [188]։

¹⁴ Տե՛ս Խ. Արուսյանի թողոններ, № 166։

¹⁵ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 2/11, էջ 244, 253 և 254, «Արարատ», 1876, էջ 174։

¹⁶ Այդ նամակը հայտաբերված չէ (դուցե չի՞ էլ պահպանվել)։

¹⁷ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 2/11, էջ 177։

Այսպիսով՝ Աբովյանի ձեռքին է եղել Գալուստ արքեպիսկոպոսին ուղղված այդ երկրորդ նամակը՝ դրված 1795 թ. նոյեմբերի վերջերին։

Հանգամանորեն ուսումնասիրելով վավերագիրը՝ նրա ուշադրությունը կենտրոնանում է հատկապես այս տողերի վրա.

«Տե՛ս դու աստանօր զանտանելի տագնապ և զաղէտ ողորմելի բնակչաց քաղաքին՝ զաղաղակ գոժի և ողբոց, զձայն սգոյ և լալեաց, զարտասուս ծնողաց ի վերայ դաւակաց, զաղէխորով և զղառնակսկիծ հառաչումն առ հասարակ բաղմաց, զհեղումն անպարտ արեան երիտասարդաց, զկոծումն և զճիշկուսից և կանանց, զաշխարելի տեսութիւն տղայոց և մանկանց, և զանրմբերելի վիշտս և զնեղութիւնս կապելոց առաջի գերշաց, և զանհամեմատ տառապանս ազատաց և ռամկաց»¹⁸։

«Ձայն աղաղակի ուրբոց և այլեաց փակէ զլսելիս...» բանատողը, որով, ինչպես տեսանք, Աբովյանն սկսում է իր բանաստեղծությունը, այլ բան չէ, քան վերոբերյալ հատվածի «...զաղաղակ գոժի և ողբոց, զձայն սգոյ և լալեաց...» խոսքերի բանաստեղծական վերակառուցումը։ Ուրիշ բառային համընկնումներ թեպետ և չկան, բայց Աբովյանը կարողացել է իր քերթվածի մեջ ներարկել պատմական վավերագրի բուն ոգին ու տրամադրությունները։

Ռոմանտիկ արվեստագետներին հատկանշական էր մի ակնարկից, բառից երբեմն կիսատ ասված մի խոսքից զրդում ստանալով՝ իրենց հզոր երևակայությամբ կյանքի կոչել անսպասելի պատկերներ ու գիպվածներ։ «Ձայն աղաղակի...» բանաստեղծության մեջ ևս առկա է նմանօրինակ իրողություն, միայն թե հեղինակը չի կարողացել իր սքանչելի մտահղացմանը պատշաճ մարմին տալ։

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաջորդ նամակը, Աբովյանի «Ձայն աղաղակի...» բանաստեղծության վավերական հիմքն ու աղգակը լինելուց բացի նաև վստահելի պատմական հիշատակարան է, որ մեծապես հարստացնում է տփղիսահայության՝ 1795 թվականի ողբերգության մասին եղած խիստ աղքատիկ գրանցանությունը։ Այստեղ կան տվյալներ, որ բացակայում են անգամ Սերովբե պատմիչի «Համառոտ պատմութիւն աւիրեցման Փայտակարան մայրաքաղաքիս ի խանէն աղայ Մահմադի ի 1795 և ի 11 սեպտեմբերի» երկի մեջ (տե՛ս «Դիվան հայոց պատմության», գ. Ժ, էջ 353—375), մի կողմ թողած երբեմն Դ. Կալատողյանին պատկանած ձեռագրի անանուն հատվածը․ (տե՛ս «Տեղեկագիր», 1941, № 3—4, էջ 49—52)։ Դրանցից են՝ Հաղբատի միաբանների նահատակության մասին եղած վկայությունը, Էջմիածնի վանքի իրեղենների թալանը, Մեկիք Մնացականի բնութագիրը և այլն)։

Ահա՛ ինչու հարմար գտանք սույն հաղորդման վերջում ամբողջությամբ հրատարակել Աբովյանի թողոններում պահպանված այդ հիշատակարան-նամակը, իբրև կարևոր սկզբնաղբյուր տփղիսահայության պատմության և ուշագրավ նյութ «Ձայն աղաղակի...» բանաստեղծության ստեղծագործական պատմության ուսումնասիրության համար։

Բնագիրը վերարտադրված է ամբողջությամբ և հարազատորեն։

- 1 Անարատ վարուք սրբութեամբ և պայծառ առաքինութեամբ զարդարեալ, լուսաւոր և անաղօտ դիտութեամբ՝ և զամբարափայլ իմաստութեամբ չահաւորեալ յեկեղեցի Աստուծոյ, քարող բանին ճշմարտութեան, և հզօր ախոյեան ամբիծ և անարատ ուղղափառ սուրբ հաւատոյ, գերագով և յարգոյապատիւ մեծահռչակ հօր մերում սրբոյ, տեառն Գալուստ րենական և բանիրուն վարդապետիդ՝ և առաքելաշնորհ. արհի եպիսկոպոսիդ՝ առն-

¹⁸ Տե՛ս Հավելված։

ծալելով զբրիստոսականն ողջոյն՝ մատուցանեմք համբոյր աստուածաբարձ սրբոյ Աջոյդ, յոյժ կարօտիւ առաւելագոյն սիրով և հոգևոր տարփանօք:

Արդ տակաւին մեծութեան քո խնդիր է հասու լինիլ ճշմարտութեան՝ և իմանալ զգործ պատերազմին Պարսից ընդ Վրաց՝ և դժնդակութեան նոցա ընդ ամենայն կողմն Արեւելից: Բայց ո՛չ երբէք ստոյդ և անսխալ պատմի յումեքէ, և ոչ ուրեք երևի պարզութիւն բանին. այլ յամենայն զրոյցս խառն ընդ ստութեան գոյ հաւաստութիւն, գիցո՞ոք և հարցանեմք, ուստի և զգամք բանիւ թղթոյ ինչ, հետեաբար յետ աւուրց զհակառակն լսեմք այն ամենայն խօսից: Դու ևս բարւոք զիտես օրինակաւ, որ զոլով մեր ի սուրբ Աթոռոջ, անցք և եղելութիւնք Երեւանայ՝ և կամ մասնաւոր վրդովութիւն և խռովութիւն ինչ եղեալ անդանօր, այնքան մերձ և առ դուրս մեր կատարեալ, ազգեցութիւն իրացն՝ բիրակերպ գայ ի լսելիս մեր, և այն ամենայն ընդդէմ միմեանց: Իսկ այժմ ո՞րչափ հեռի եմք անտի, այնքան բազմապատկութիւն ունին ասութիւնքն՝ եթէ բանի, եթէ գրոյ: Նմանսպէս առ ձեզ՝ և առ այլ հեռաւոր գաւառս: Ոչ եթէ աւելորդով պատմեն, այլ մասամբ իւրք ունելով տեղեկութիւն զայն և եթ համբաւեն. զի են՝ որք զլուր բանին անխտիր և թարց ընտրութեան հռչակ հարկանեն, են՝ որք արգարև հետեին և յուղեն զճշմարիտն, բայց ո՛չ որոշեն զանձինս պատմչաց: Եւ են՝ որք աչօք իւրեանց իսկ ականատեսք են իրագործութեանց ամենայնից, որպէս փախստեայքն նոքին անտի ի Թիֆլիզու, բայց զտագնապ և զարձաւորս ներկայական տառապանացն միայն տեսեալ, զայն և եթ խօսին. և աւելի քան զայն՝ ոչ գիտեն պատմել և ճառել: Թէպէտ՝ յաւելուն ի խօսս բաղում ինչ, բայց՝ ի լրոյ ունելով զգիտութիւն՝ և ո՛չ ի տեսութենէ, ջրեն այն ամենայն բանք՝ այլոյ ումեմն պատմութեամբք: Եւ մինչև ցարդ տակաւին ի սոյն ոճ ընթանայ պատմութիւն իրացս այսոցիկ: Վասն որոյ ո՛չ ունիմ երբէք սիրտ՝ խօսելոյ և գրելոյ զայսոսիկ, և ո՛չ համարձակիմ զեկուցանել քումդ մեծութեան: Բայց ըստ որում այժմ խնդրեալ էիր հարկիւ՝ գրել զոր ինչ աստեն բանք են և զրոյցք՝ զճշմարիտն, նորապէս խնդիր արարաք աստանօր՝ և զտաք զոմն ի գերելոց անտի, որ էր նորաշէն եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Յակոբն (զոր իցէ թէ ճանաչիցես), որ բոլոր տամբ իւրով և ամենայն ընտանեօք՝ Ժէ հոգւով գերի է անկեալ՝ որոց վասն փրկութեան եկեալ աստ՝ լալով և մորմոքելով զողորմութիւն հայեէր: Զսա բերեալ առ մեզ, հարցմամբ տեղեկացաք ի նմանէ զամենայն անցս պատերազմին ստուգապէս: Արդ՝ չե ևս եկեալ օր պատերազմին՝ ամսօրեայ ժամանակաւ յառաջ՝ ամենեքեան որդիք Արքային մեկնեալ են ի նմանէ, առ ի պահել իւրաքանչիւր այր՝ զվիճակ իւր և զժառանգութիւն: Եւ միմիայն մնացեալ է ընդ նմա Դաւիթ միրզայն՝ որդին Գէօրգին միրզային: Եւ զէտովփալն¹⁹ զորմէ ստաբանէին, եթէ՝ զնացեալ է առ թազուհին, ամենայն մարդկամբ իւրով, և բոլոր աղխիւք և ընչիւք զնացեալ է ի Կախէթ: զՀետ նորա ելեալ են թաւատք և ամենայն մեծամեծք Վրաց՝ առեալ ընդ ինքեանս զկանայս և զմանկտիս, և զամենայն զկահս և զկարասիս: Եւ յոյժ սակաւք են առ սոսա գտանկցեալք ի Հայոց, որոց թիւն ո՛չ կարէ ելանել ընդ ձ. զի յետ ելանելոյ նոցա՝ հրամայեալ է արքայն մունետիկ կարդալ ի քաղաքին, եթէ՝ մի՞ ոք ևս ելանիցէ:

¹⁹ Միւս նկատի տանի, պարզ չէ:

2

աստի || ի քաղաքէս: Քաջալերեցարուք ամենեքեան՝ անձն իմ եղևալ եմ
րնդ անձինս ձեր:

Լոկ²⁰ մնացեալ են ամենայն ժողովուրդք Հայոց ի տունս և ի բնակու-
թիւն իւրեանց, այլ և յոյժ բաղումք յալգէն Վրաց՝ որք միանգամայն պա-
տերաղմօղք իցեն՝ հեծելազօրք և հետեակք: Եւ այսպէս յանհոգս եղևալ՝
ոմանք ի բնակութիւնս իւրեանց, և ոմանք արտաքոյ քան զքաղաքն ընդ
արքայի վառեալ պատրաստեալ դոլով, յանկարծակի դնեալ են ի վերայ
նոցա զօրքն Պարսից ի ժ սեպտեմբերի, յաւուր Բ շաբթի պահոց Սրբոյ
Խաչին: Եւ ի խմբել պատերազմին՝ նախ՝ ի սկզբան ապստամբեալ է ի
նմանէ Իմէրելն, և արձակեալ ի վերայ քաղաքին՝ աւար հարեալ է զնա
անիրաւաբար և խստութեամբ առաւել քան զթշնամիս: Եւ զայն տեսեալ
այլազգի զօրացն՝ թօթալիեալ են ամենեքեան ի նմանէ՝ և փախուստ
առեալ, և մնացեալ է արքայն միայն իւրովք Վրացի զօրօքն, որովք ի դիմի
հարեալ քաջութեամբ թշնամեացն, սաստիկ հարուածովք և բաղում կոտո-
րուածովք արարեալ է զյաղթութիւն մեծ՝ յառաջնում աւուր մարտին ի ժ
սեպտեմբերի: Իսկ յերկրորդում աւուր ի վաղին ի Գ շաբթի ի ժԱ սեպտեմ-
բերի յառաջ խաղացեալ շահն²¹ ինքնին՝ հրամայեալ է կրկնել պատերազմն:
Յայնմ վայրի զհողին Վասակայ զգեցեալ՝ և նորին շարութեանն հաղոր-
դեալ մէլիք Մէժլումն, և Գեանճու Ջաւաթ-խանն՝ յառաջադէմ եղեալ զօ-
րացն Պարսից՝ առեալ են զամուր ամուր տեղիսն ապաստանի և պատեալ
զքաղաքան նախ քան զտալ պատերազմին՝ երկաքանչիւրոց կողմանց առ
միմեանս: Եւ զայն տեսեալ Վրաց՝ լքեալ և վհատեալ են իսպառ, և բնա-
ւին միջակտուր եղևալ և ահաբէկ յամենայնի պաշարեալ է զնոսա տարա-
կոյսն: Եւ յայնմ աւուր ևս թէպէտ պատերազմեալ են ընդ նոսա, բայց ոչ
յուսով յաղթութեան, այլ դիտելով ընդ ճանապարհս փախստեան: Ուստի
ի սաստկանալ պատերազմին՝ պարտեալ են զօրքն Վրաց առաջի զօրացն
Պարսից, և փախուստ առեալ մինչև ի դուռն քաղաքին, որ հանէ ընդ հրա-
պարակն՝ Տափիթաղ կոչեցեալ: Եւ անտի արքայն արգել տայ զօրացն ի
պատերազմելոյ, և ձեռամբ նշանացի զպահապանս դրացն և պարսպացն ի
բաց մերժէ, և հրաման տայ բանալ ամենայն դրացն: Եւ ինքն մտեալ ընդ
այն, և անցեալ ընդ քաղաքամէջս՝ հանդերձ Դաւթին՝ և ամենայն մար-
տիկ զինուորական դասուքն, ելանէ ընդ դուռն Հալուապարու, և անկանի
ճեպով ի Կախէթ: Եւ նոյն ժամայն զօրքն Պարսից տիրեն քաղաքին, և
մտեալ առնուն զնա յաւար և ի կողոպուտ: Տե՛ս դու աստանօր զանտանելի
տազնապ և զաղէտ ողորմելի բնակչաց քաղաքին՝ զաղաղակ գութի և ող-
բոց, զձայն սգոյ և լալեաց, զարտասուս ծնողաց ի վերայ զաւակաց,
զաղէխորով և զդառնակսկիծ հառաչումն առ հասարակ բազմաց, զհեղումն
անուարտ արեան երիտասարդաց, զկոծումն և զճիշ կուսից և կանանց,
զաշխարելի տեսութիւն տղայոց և մանկանց, և զանըմբերելի վիշտս և
զնեղութիւնս կապելոց առաջի գերչաց, և զանհամեմատ տառապանս ազա-
տաց և ուսմկաց: Մուտ Քաղղէացւոցն յԵրուսաղէմ առ Սեղեկեաւ ար-
քայիւ՝ սիրով և քաղցրութեամբ էր յոյժ՝ քան բարբարոսացս յայսր արշա-
ւելոց: Զի յայնժամ աղքատք ժողովրդեան, որոց ոչինչ գոյր, շնորհս գտին
առաջի բռնաւորին, և բնակեցոյց զնոսա անդէն յերկրին, տալով նոցա

20 Այս բառը ընադրում դժվարութեանն է. վերականգնված է ենթադրաբար:

21 Այսինքն՝ Աղա-Մահմադ-խանը:

այդիս և ջրաբերիս: Իսկ այս այր ոչ ի նոյնօրինակ ի կիր էարկ զգութ իւր՝ տալ ումեք զազատութիւն, այլ իսպառ աւելեաց զերկիրն, և զամենեւեան զբնակիչսն խաղացոյց յօտարութիւն և ի նժդեհութիւնս:]]

Եւ արդ՝ ի մտանել ղօրացն Պարսից ի քաղաքն, և յածիլ աստ և անդ՝ յայնժամ արժանի զովութեան զործ ղործեալ իցէ քաղաքացւոյն: Զի ամենեւեան արբ քաջացեալք, և կանայք արիացեալք, միախորհուրդ և միակամ լեալք, իւրաքանչիւրք զատ զատ ի տունս իւրեանց ամրացեալք, ի վերայ անձանց և որդւոց արեամբ չափս պատերազմեալ՝ ի պատուհանից և ի դրանց մարտ եղեալ, զբազումս ի նոցանէ սատակեալ են հրացանիւ: Եւ այնքան յաճախ կոտորեալ են զնոսա, մինչ լցեալ են դիակամբք նոցա զամենայն անցս պողոտայից. և զրեթէ՝ զամենայն զտուն այսպէս պատերազմաւ և արեամբ են առեալ: Բայց՝ զի՞նչ օգուտ աստի, որ ի վախճանի մատնեալ են ամենեւեան ի գերութիւնս Առ այս ամենայն յաւելուն ոմանք թէպէտ ասել, եթէ՝ սուր տուեալ են յամենեւուն, որպէս և մեք զրեցաւ յառաջ քան զայս՝ այնպէս իմանալով, բայց՝ ստուգիւ տեղեկացաք, որ չէ եղեալ: Սակայն ի թօթափիլ ղօրացն ի քաղաքն, և յառնուլ զնա ի յաւար և ի յափշտակութիւն, սակաւ ոմանք պատերազմելով ընդ աւարառուն՝ մեռեալ են անդանօր, որպէս և ինքեանք սպանեալ են ի նոցանէ զբազումս: Դիպելով սպանումն և քանեաց ոմանց քահանայից, անուն ել, եթէ՝ զամենեւուն զնոսա կոտորեալ են իսպառ: Յախպատու առաջնորդ Դաւիթ վարդապետն զերեցեալ է, և է այժմ ի Գեանջայ: Սպանեալ են ի միաբանից նորա զերիս վարդապետս, որոց և մին է այն՝ որ եկն ի սուրբ Աթոռն ընդ նմա, և մանկացաւ: Խորանաշատու առաջնորդ Վանական վարդապետն փախուցեալ ի Վրաստան փրկեալ է զանձն: Առաջնորդ հանգուցեալ Մարտիրոս վարդապետն (զորմէ յառաջագոյն զրեցի) ի զգալ զաղաղակ քաղաքին, և ի խոովիլ ժողովրդեանն, յաղագս եկեալ հասեալ տազնապին, անփոյթ արարեալ զանձնէ և զկայից իւրոց, և միանգամայն մոռացեալ զինքն, հասեալ է փութով ի տուն մէլիք Մնացականին՝ որդւոյ մէլիք Աւետիքին՝ աղաչել զնա յաղագս եկեղեցական զարդուց և սպասուց սրբոյ Աթոռոյն՝ առ տեղեալ միով թագուցանել, և կամ փախուցանել ի Կախէթ: Զայս խնդիր ո՛չ միայն ի նմին ժամում արարեալ է ի նմանէ, այլ բազում անգամ յառաջագոյն՝ հանապաղորդ աղերսելով սկսեալ յօրէ յայնմանէ, յորմէ հետէ առաքեալ են առ նա ի սրբոյ Աթոռոյն զայն ամենայն յաւանդ և ի պահեստ: Եւ նորա մինչև ցայս վայր այս է եղեալ պատասխանի առ Մարտիրոս վարդապետն, եթէ՝ Սրբազանն ինձ է առաքեալ, և ո՛չ քեզ: Եթէ՝ զու հոգացօզ ոք էիր, քեզ առաքէր՝ և ո՛չ ինձ: Ապա՝ զի՞ կայ քո և այսոցիկ հոգալ և կամ խօսել ինչ: Արդ՝ այսպէս խօսելով ապիրատն այն՝ անփոյթ արարեալ է զնորոք ամենեւին՝ հոգալով միայն վասն տան իւրոյ և ապրանաց, և օր րոտ օրէ զամենայն զկայս և զգոյս իւր, և զրոյր ծանրութիւն տանն առաքեալ է ի Կախէթ, և մնացեալ ինքն միայն՝ թեթեալ արամբք, որովք կարիցէ հասանիլ նեղութեան և հալածանաց՝ ի սուղ ժամանակի անկանիլ անդ: Եւ յայսմ վայրի մինչ երթայ առ նա Մարտիրոս վարդապետն, տեսանէ զիրսն տակաւին անհոգս և անփոյթ եղեալ, անկեալ զնին ընդ յարկաւ նորա ի բացեայ: Եւ մինչ սկսանի զարձեալ խօսիլ վասն նոցին, և աղաչել զայրն, կալեալ զձեռանէ նորին՝ հեռին ի րարեսլաշտութենէ՝ կացուցանէ ի վերայ իրացն, ասելով՝ Ահաւասիկ զու, և ինչք քոյին:

4 Աթոռոյ, դու գիտես զինչ առնելիզ զդոսաւ Զկայ ինձ այսուհետե մասն յիրիդ
այդմիկ: Ես ի մէջ անհուն ցաւոց, և բիւրաւոր հոգոց կամ, և վարանեալ եմ
յամենայնի: Եւ արդ՝ ի լսել Մարտիրոս վարդապետին զայս պատաս-
խանի և վախճանի, և ի տեսանել զքաղաքն ամենայն ի վրդովման և ի
խռովութեան, և իբրեւ զծով ի սաստիկ ալիկոծութեան, և ամենեցուն յեր-
կիւղ վտանգի և նաւաբեկութեան ժամանեալ, որոց տեսիլ աշացն շրտու-
ցեալ՝ ո՛չ զօրեն ճանաչել զընտանիս և զօտարականս, զեկն և զքնակ,
զտէր և զծառայ: Ո՛չ ընկեր ընկերի իւրում օգնել ջանայ, և ո՛չ փութայ ոք
ի շինութիւն // հասարակաց: Ո՛չ գոյ ի հրապարակս ողջունել, և ոչ երբեք
հարցումն առնել: Այլ յահէ սատակման սասանեալ տո՞հասարակ՝ ամե-
նեւրեան խոնեալ զմիմեամբք զանլուծանելի կնճիռ իմն գործեն ի տնօրէ-
նութեան կարգս՝ աներկիւղ և անձնապաստան նախնի կացութեան: Ղօղես-
ի ծերպս և ի քարանձաւս՝ լուեն զձայնս երգոց ցնծութեան: Եւ կամ իբրեւ
յօձէ հարեալ յեղջերուս՝ արշաւելով ի ջուր հանգստեան՝ բուժել զախտս
երագեն: Եւ կամ ի ճշմարիտ օրինակեալ՝ իբրեւ զհօտ՝ որոց ոչ իցէ հովիւ
ի դժնդակ գայլոց ցրուեալ՝ ի փախուստ դիմեն՝ այր իւրաքանչիւր՝ զանձն
իւր ապրեցուցանել կամեցեալ: Յամենայնի շիւարեալ՝ և ի տարակուսու-
թենէ հոգս մտեալ, մնացեալ է աննպաստ և անճարակ յուստեքէ: Բայց՝
այսու ոչ է դանդաղեալ՝ առնել զգործ բարեյօժար մտացն յորդորանաց:
Քանզի՝ նոյն կիտացն թռուցեալ արտաքս ի դուրս, և խուզեալ աստ և անդ,
գտեալ է զսայլս բարձեալս անարգ աղիւսիք՝ և յոչինչ պէտս հարկաւորեալ
իրօք ի գնալն զճանապարհ վախստէից, և հասեալ յայնս, եթէ սիրով՝
և եթէ բոնութեամբ՝ զկրկին փոխարէն խոստանալով, և բազում պարգևօք
հաճեցուցեալ զկամս տեառն, թօթափեալ է զբեռինսն ի նոցանէ, և ի վար-
ձու կալեալ զսայլսն, և բերեալ բարձեալ ի նոսին՝ զիրսն զայնոսիկ, ու-
ղևորեալ է զէպ ի Կախէթ: Եւ զէպ ի այս յայն կէտ, յոր ապստամբեա,
իմէրելն՝ աւար առնու քղաղաքն: Եւ յայսմ վայրի մինչ ճէպով վարեն
զսայլսն՝ անկանիլ ընդ ճանապարհ, չեւ հեռացել՝ հուպ ընդ դուռն քա-
ղաքին՝ յարձակին ի վերայ կատաղիքն այնք թշնամիք, և անիրաւաբար
թրածեծ արարեալ կտրատեն ընդ լծով մտեալ զեղինս սայլիցն, և արկա-
նեն զձեռս ի սայլսն առնուլ զնոսա ի յափշտակութիւն: Բայց կալով Մար-
տիրոս վարդապետին ի վերայ՝ արեամբ չափ ճգնեալ, և յանպատմելի
բրտունս աշխատահոծ շարշարանացն լուացեալ, ընգզիմանայ նոցին յոյժ.
և առ ինքն եղեալ արամբքն պատերազմեալ՝ ի բաց վարէ զնոսա յամե-
նեսեան, և ո՛չ տայ բնաւ զսայլսն ի յափշտակութիւն: Յետ այսր ամենայնի
պահանջէ ի հարկէ մինչև ցաստէն արարեալ զաշխատանսն կրկնել
միւսանգամ ևս: Ուստի տապի և նեղի յոյժ, և բազում տառապանօք և
ջանիւ կալով ի դեղերանս գիւտի եղանց՝ մինչ յածի այսր և անդր, վաղվա-
ղակի հասանին անդ առ նոսա տսպատակաւորք Պարսից, և զհետ նոցա
մտանեն ամենայն զօրքն ի քաղաքն: Եւ յայնժամ ի ձեռս նոցա յափշտա-
կութիւն անկանին սայլքն իսպառ, և ի քթթել ական ի հազարաւոր ձեռս
անցանին և անյայտ լինին: Անդանօր գերի անկանի Մարտիրոս վարդա-
պետն, և կապեալ ընդ այլ բազում զերիս, յառաջ ածեն, և տարեալ կացու-
ղանեն ռնա առաջի սարտարին²², Որում առընթեր կալով Երեւանայ խանի
նազիր Զաֆար-պէկն՝ ճանաչէ զնա: Եւ մատուցեալ առաջի իշխանին

22 Անտարակույս, նամակագիրը նկատի ունի դարձյալ Աղա-Մահմադ-խանին:

աղաչէ զնա վասն նորա, և ազատեալ արձակէ զնա ի րայ. և ուղևորէ յԵրևան: Որոյ ընդ ճանապարհ անկեալ միայնակ և հետիոտս՝ ցուպ ի ձեռին, ունելով զպատառատուն փափախ ի զլուխն, և զտրեխ ի յոտսն: Եւ հասեալ ի սուրբ Հովհաննէի վանսն, անտէն ընկալեալ զվախճան կենաց՝ երջանիկ մահուամբ վրիսեալ է առ Աստուած: Զոր և տարեալ անտի ի սուրբ Աթոռն, պաշտմամբ և պատարագաւ արժանաւոր յուղարկութիւն և թաղումն արարեալ, եղեալ են ի զիրս միաբանից: Որով հանգիստ և արքայութիւն տացէ Տէր, և հատուցէ նմա վարձս ըստ վաստակոց իւրոց՝ յաւուր գալստեան իւրում, և յարքայութեան ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր. Ամէն²³://

НЕИЗВЕСТНОЕ ПИСЬМО О РАЗРУШЕНИИ ТИФЛИСА
В 1795 ГОДУ И СТИХОТВОРЕНИЕ Х. АБОВЯНА
«ГЛАС ВОПИЮЩИХ...»

П. О. АКОПЯН

Резюме

В сообщении излагается история создания стихотворения Х. Абовяна «Глас вопиющих...». Указывается соответствующий исторический документ, явившийся творческим стимулом для этого стихотворения. Прилагается до сих пор неизвестный исследователям упомянутый документ, который содержит важные данные о судьбе тифлисских армян и о разрушении города в 1795 году.

²³ Գրականության և արվեստի թանգարան, Խ. Արովյանի թղթեր, № 166: